
Ա.Ս. ԳՐԻԲՈՅԵՂՈՎԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ
ԿՈՐԾԱՆՈՒՄԸ ԹԵՂԱՆՈՒՄ

ՄԻՍՈՆՅԱՆ Վ.Ռ.

1829թ. հունվարի 30-ին Թեհրանում ռուս զորող Ա.Ս. Գրիբոյեդովի ղեկավարած դիվանագիտական առաքելության կործանման հանգամանքները ցայսօր էլ լուրջ հետաքրքրություն են առաջացնում: Այդ ողբերգությունը վերապրած ականատեսների երեք վկայություններ են հայտնի. առաջինը դեսպանական առաքելության անդամներից փրկված քարտուղար Բ. Մալցովինն է¹, երկրորդը դեսպանակազմի պարսիկ ուղեկցողի (մեհմանդարի)՝ քարտուղարի պատմածն է, որի հիման վրա հետագայում կազմվել է հայտնի «Ռազմագեկույցը» («Реляция»)², երրորդը դեսպանական առաքելության սուրհանդակ (դուլամ), հայազգի Համբարձումի (Բերահիմ-Բեգի) վկայությունն է³: Չափազանց կարևոր են ոչ անմիջական, բայց Պարսկաստանում տարբեր ազգությունների, նույնիսկ՝ եվրոպացի ականատեսներից հավաքված վկայությունների հիման վրա 1833-1838թթ. Պարսկաստանում Ռուսաստանի լիազոր դեսպան կոմս Բ.Օ. Սիմոնիչի⁴ և նրա դեսպանակազմի առաջին քարտուղար Կ. Բոդեի հուշերը⁵: Առավել իրատեսական են Ա. Գրիբոյեդովի դեսպանության պարսիկ զին-

¹ Акты, собранные Кавказскою Археографическою Коммиссиею. Архив Главного управления наместника Кавказского (այսուհետև՝ АКАК), т. VII, Тифлис, 1878, док. 672, с. 688-689; տե՛ս նաև **Берже Ад.П.** Смерть А.С. Грибоедова, (Русская старина, 1872, № 8, с. 174-179) (Բ. Մալցովի՝ 1829թ. մարտի 18-ի, մարտի 21-ի, մարտի 23-ի զեկուցագրերն Բ. Պասկևիչին):

² Грибоедов. Его жизнь и гибель в мемуарах современников (Реляция происшествий, предваривших и сопровождавших убийство членов последнего российского посольства в Персии, А., 1929, с. 151-184) (թիվ 124 ծանոթագրության մեջ նշվում է, որ 1830թ. «Relation des evenemens, qui ont precede l'accomplissement du massacre de la derniere ambassade russe en Perse» վերնագրով ռազմագեկույցը «Nouvelles annales des voyages et des sciences geographiques» հանդեսում (N 48, էջ 344-345) ֆրանսերենով հրատարակվել է ոմն անգլիացու կողմից: Հավանական է համարվում, որ այն գրի է առնվել պարսիկ ականատեսի պատմածից): տե՛ս նաև **Берг Н.В.** Из рассказов С.А. Соболевского (Русский архив, 1871, N 1, с. 187-196); **Ефремов П.А.** О смерти А.С. Грибоедова (Русский архив, 187, 2, год десятый, с. 1491-1538).

³ Հ.Ա., Գրիբոյեդովի սպանությունը (նրա ծննդեան 100-ամեայ տարեդարձի առիթով) Մշակ, 1895, հունվարի 5; հունվարի 6: Տե՛ս նաև **Алавердянц М.Я.** Кончина А.С. Грибоедова (по армянским источникам), СПб., 1901; Грибоедов. Его жизнь и гибель..., с. 199-201:

⁴ Грибоедов. Его жизнь и гибель..., с. 201-206 (առաջին անգամ տպվել է «Москва» թերթի 1867թ. № 145-ում):

⁵ Նույն տեղում, էջ 207-211 [Կ. Բոդեն «Смерть Грибоедова» հուշերը 1879թ.

վորների հայ հրամանատար Յաղուր (Հակոբ) Սուլթանի, ռուսական դեսպանատանը կից Շահ-Աբդուլ-Ազիմ բերդի մոտ գտնվող հայկական եկեղեցու գանձապետ Խուդադատի, թավրիզեցի Մալքումի (որը Միրզա-Յաղուրի գործակատարն էր), մայոր Փաշա բեգի, թիֆլիսեցիներ Հովհաննես Մանթաշյանի և Մահմեդի Եղո Մարգարյանի վկայությունները, որոնք անձամբ լսել, համեմատել և գրի է առել Գալուստ Շերմազանյանը⁶։ Հարկ է փաստել, որ ցայսօր արված չեն թվարկված բոլոր վկայությունների համադրված վերլուծությունները։ Ռուսական պաշտոնական տեսակետը ձևավորվում է հիմնականում առաքելության կենդանի մնացածներից մեկի՝ քարտուղար Բ. Մալցովի զեկուցագրերի⁷ և իրանական կողմի ներկայացրած պաշտոնական բացատրությունների⁸ հիման վրա։ Ըստ Բ. Մալցովի՝ կատարվածի մեղավորը եղել է Իրանի շահը, որը, իմանալով ժողովրդի հուզումների մասին, նախօրոք չի տեղեկացրել դրանց մասին, ջարդի նախորդ գիշերը գործ չի ուղարկել և Ա. Գրիբոյեդովին էլ չի համոզել հեռանալ Թեհրանից։ Բ. Մալցովը գրում է, որ չկարողանալով շահի հարեմի գաղտնիքներին տեղյակ Միրզա-Յաղուրին⁹ որևէ կերպ հետ բերել և, վախենալով Թուրքմենչայի պայմանագրի խախտումից, շահն իր պաշտոնյաների հետ ծրագրում է, որ գրգռված ամբոխը կներխուժի դեսպանատուն, կսպանի Միրզա-Յաղուրին։ Բրենք, ձևանալով անտեղյակ և վախեցած, շահի որդի, նահանգապետ Ալի-շահ Զիլլի-Սուլթանին կուղարկեն հանդարտեցնելու ամբոխին, ինչով էլ ռուսական իշխանություններին կկարողանան համոզել պարսկական կողմի անմեղության մեջ։ Հակասելով ինքն իրեն՝ Բ. Մալցովն ակամայից հաստատում է այն միտքը, որ շահն ու արքունիքը մտադիր չեն եղել կործանել առաքելությունը և սպանել Ա. Գրիբոյեդովին, այլ նպատակ են ունեցել ոչնչացնել միայն Միրզա-Յաղուրին, իսկ Ալի-Յարխանի երկու կանանց և վախեցնել անգիջում Ա. Գրիբոյեդովին¹⁰։ Բնականա-

հրապարակել է «Животисное обозрение» հանդեսի № 4-ում (էջ 94-95)։

⁶ Շերմազանյան Գ., Նիթեր ազգային պատմության համար, Երևելի Հայկազունքի Պարսկաստան, Ռոստով (Դոնի վերայ), 1890=ՌՅԼԹ, էջ 77-103։

⁷ АКАК, т. VII, гок. 672, с. 688-689 (Բ. Պասկևիչի՝ 1829թ. մարտի 29-ի հաղորդագրությունը Կ. Նեսերոդեին)։ гок. 684, с. 696 (Կ. Նեսերոդեի՝ 1829թ. ապրիլի 23-ի հաղորդագրությունն Բ. Պասկևիչին), որոնցում խոսվում է Բ. Մալցովի՝ 1829թ. մարտի 18-ի զեկուցագրերի մասին։

⁸ Նույն տեղում, փաստ. 698, էջ 704-706 (Կ. Նեսերոդեի հաղորդագրությունն Բ. Պասկևիչին՝ 1829թ. օգոստոսի 12-ին, որում տրված է Աբբաս-Միրզայի որդի Խոսրով-Միրզային ընդունելու արարողակարգը և վերջինիս ճառը ռուսական արքունիքում)։ Берже А.Д.П. Хосров Мирза, 1813-1875 (Русская старина, 1879, с. 333-352).

⁹ Շերմազանյան Գ., նշվ. աշխ., էջ 77-82 (Միրզա-Յաղուրը շահի հարեմի գանձապետ Հակոբ Մարգարյանն է, որը նախկինում գերվել է Հայաստանում, ներքինացվել, իսկ հետագայում իր կրթության և գիտելիքների շնորհիվ բարձր դիրքի է հասել Թեհրանում)։

¹⁰ АКАК, т. VII, гок. 661, с. 679-681 (Բ. Պասկևիչի՝ 1829թ. մարտի 9-ի հաղորդագրությունը Կ. Նեսերոդեին, որին կցված է Ֆաթի-Ալի շահի հրովարտակն Աբբաս-Միրզային, որում գերության մեջ գտնվող վերոհիշյալ երկու կանանց նա ներկայացնում է ոչ թե որպես Ղարաքիլիսայից գերված երկու հայերի, այլ՝ Մուշից գերեվարված երկու քրդուհիների, որոնք վաղուց իսլամ էին)։

բար, չցանկանալով բացահայտել Ա. Գրիբոյեդովի և դեսպանատան այլ անդամների կողմից պարսիկների ազգային և կրոնական ինքնասիրությունն ու մոլեռանդությունը գրգռելու հանգամանքները՝ Բ. Մալցովը դեպքերը նկարագրելիս միտումնավոր շրջանցում, խեղաթյուրում է կամ չի անդրադառնում շատ մանրամասների¹¹ (դրանք տրված են «Ռազմագեկույց»-ում - Ս.Վ.):

Ռուսական իշխանությունները, ստանալով պարսկական կողմի բացատրությունները¹² և հաշվի առնելով երկու ճակատով Պարսկաստանի և Օսմանյան Թուրքիայի դեմ պատերազմ մղելու վտանգավորության մասին Բ. Պասկևիչի հիմնավորումները¹³, փաստորեն ընդունում են, որ առաքելության անդամների և դեսպանի սպանությունը պետական մակարդակով քաղաքական դրդապատճառներ չի ունեցել, շահն ու Աբբաս-Միրզան մեղավոր չեն կատարվածի մեջ՝ ամեն ինչ¹⁴ վերագրելով, մի կողմից՝ թեհրանյան ամբոխի կուպիտ սովորությունների և գիտակցության հետ Ա. Գրիբոյեդովի հաշվի չնստելու և նրա ջանքերի չմտածված դրսևորումներին, մյուս կողմից՝ այդ նույն ամբոխի

¹¹ Բ. Մալցովը չի նշում Ղազվինում գերմանուհու ամուսին մի պարսիկի՝ ռուսական դեսպանակազմի ծառայապետ, նախկինում հավատափոխ վրացի Ռուստեմ-բեգի կողմից ծեծվելու, Ռասսաբադում պարենի փոխարեն (շորթման նպատակով) պահանջվածից ավելի քիչ գումար մուծող մեկ այլ ծերունու՝ դարձյալ Ռուստեմի կողմից ծեծվելու, Ալլահ-Յար խանի հարեմից երկու հայ կանանց ուժով դեսպանատուն բերելու, հարցաքննելու, նրանց այնտեղ պահելու, բաղնիք ուղարկելու, 1829թ. հունվարի 30-ին դեսպանատան դիմաց հավաքվածների հանդեպ կազակների ամբարտաւան պահվածքի և նրանց կողմից ամբոխի վրա առաջինը կրակելու ու մի պարսիկ պատանու սպանելու և այլ հանգամանքները: Փոխարենը նա մանրամասն ներկայացնում է Միրզա-Յադուբի կողմից իբր դեսպանակազմի թարգմանիչ շտաբսկապիտան Միրզա-Նարիման Շահնազարյանին՝ իր փրկության և ապահով Թիֆլիս հասցնելու դիմաց 500 չերվոնեց վճարելու խոստման և, թուրքերեն ու պարսկերեն չիմանալով հանդերձ, այդ մասին պարսիկներից ստացած տեղեկությունների հիման վրա կատարած «բացահայտման» մասին (²⁰⁰), և իբր այդ պատճառով էլ Միրզա-Նարիմանը ջանացել էր կանխել Ա. Գրիբոյեդովի կողմից դրսի անցուդարձերի և ժողովրդի հուզումների մասին տեղեկացվելը:

¹² АКАК, т. VII, гок. 661, с. 679-681 (Բ. Պասկևիչի՝ 1829թ. մարտի 9-ի հաղորդագրությունը Կ. Նեսեյրոդեին, որում ներկայացվում է Աբբաս-Միրզային ուղղված շահի հրովարտակր, ռուսաց կայսրին, արտգործնախարարին ու Բ. Պասկևիչին ուղղված Աբբաս-Միրզայի նամակները); гок. 698, с. 704-706 (տե՛ս Ֆաթհ-Ալի շահի և Աբբաս-Միրզայի նամակները ռուս կայսրին); Персидское посольство в России 1829 года (По бумагам графа П.П. Сухтелена) (Русский архив, 1889, № 2, с. 209-260); տե՛ս նաև՝ Базиянц А.П. Над архивом Лазаревых (Очерки), М., 1982, с. 122-125.

¹³ АКАК, т. VII, гок. 673, с. 689-690 (1829թ. մարտի 30-ի՝ Բ. Պասկևիչի նամակը Կ. Նեսեյրոդեին):

¹⁴ Նույն տեղում, փաստ. 677, էջ 692 (կայսր Նիկոլայ I-ի՝ 1829թ. ապրիլի 3-ին Աբբաս-Միրզային հղած ուղերձը), փաստ. 700, էջ 707-708 (Կ. Նեսեյրոդեի՝ 1829թ. սեպտեմբերի 13-ի հաղորդագրությունն իշխան Դոլգորուկովին. դրան կցված է Ֆաթհ-Ալի շահին տրված բարձրագույն շնորհագիրը):

մոլեռանդությանն ու սանձարձակությանը, որոնք դեռ 1826թ. Պարսկաստանի շահին դրդել էին պատերազմել Ռուսաստանի դեմ¹⁵։ Ռուսական պաշտոնական տեսակետի առումով կարևոր են 1833-1838թթ. Պարսկաստանում Ռուսաստանի դեսպան Բ. Միմոնիչի հուշերը։ Ելնելով ականատեսների, մասնակիցների, տարբեր դավանանքի և քաղաքական հոսանքների ներկայացուցիչների վկայություններից՝ Բ. Միմոնիչը նա կարծում է, որ թեհրանյան իրադարձությունները պետական մակարդակով չունեն քաղաքական ենթատեքստ՝ պարզաբանելով, որ մեղավորը շահի հանդեպ խելահեղության հասնող վերամբարձ տոն որդեգրած, իր բարեկամ հանգուցյալ Ա. Գրիբոյեդովն է եղել¹⁶։

Ռուս իրականության մեջ տեղ է գտել նաև դեպքի վերաբերյալ վերոհիշյալից մի փոքր տարբերվող այլ տեսակետ։ Չխորանալով Ա. Գրիբոյեդովի հանդեպ պարսկական արքունիքի աստելության պատճառահետևանքային հանգամանքների մեջ՝ Ա. Գրիբոյեդովի դիվանագիտական գործունեությունը նրա գրական գործերից վեր դասող Կ. Բոդեն փառաբանում է գրողի հայրենասիրությունը, ազնվությունը, պարսիկներին և անգամ շահին չզիջելու համառությունը՝ նրան համարելով իսկական պետական մարդ¹⁷։ Կ. Բոդենի վերոհիշյալ տեսակետներն ու բնութագրումները հետագայում լայնորեն օգտագործվում են խորհրդային պատմագիտության կողմից՝ Ա. Գրիբոյեդովի գոր-

¹⁵ Նույն տեղում, փաստ. 665, էջ 683-684 (Կ. Նեսելրոդեի՝ 1829թ. մարտի 16-ի հաղորդագրությունն Բ. Պասկևիչին)։

¹⁶ **Симонич И.** Убыство русского посланника (Грибоедов. Его жизнь и гибель... , с. 202)։ Հեղինակը, Ալլահ-Յար խանի հարեմի երկու կանանց և Միրզա-Յադուբին դեսպանատանը պահելու հանգամանքը համարելով սխալ, գտնում է, որ առաջին դեպքում դա հարված էր մահմեդական կրոնին և մոլեռանդությանը, իսկ երկրորդ դեպքում՝ շահի ինքնասիրությանը։ Նրա կարծիքով՝ Ա. Գրիբոյեդովը, հասկանալով, որ Միրզա-Յադուբը գերի չէ և նախքան ռուս-պարսկական երկրորդ պատերազմը դեռ պատանի հասակում է Երևանի խանությունից Պարսկաստան բերվել, ինչպես նաև որ նա բարձր պաշտոնով ծառայության մեջ է եղել շահի հարեմում, պետք է նրան համոզել հետաձգել իր մտադրությունը։ Ռուսական դեսպանատան վրա կատարված հարձակման և ջարդի պատճառներն Բ. Միմոնիչը տեսնում է Ա. Գրիբոյեդովի դեսպանակազմի որոշ անդամների գրգռիչ պահվածքի պատճառով առաջացած արքունիքի գրեթե բացահայտ աստելության, երկու կանանց դեսպանատանը տղամարդկանց մեջ պահելու պատճառով հոգևորականության գրգռվածության, Ալլահ-Յար խանի կողմից վրեժի առիթ փնտրելու, պալատականների կողմից Միրզա-Աբուլ Հասանի՝ Ա. Գրիբոյեդովի դեմ բողոք գրելու կոչի մասին հանկարծ հիշելու և շահին գոհացնելու հարցերի հավաքական ամբողջության մեջ։ Նա սխալ է համարում նաև Ա. Գրիբոյեդովի պահվածքը դեսպանատան մոտ հավաքված ամբոխի առջև՝ գտնելով, որ նա պետք է արգելեր իր աշխատակիցներին նույնիսկ պատուհանից երևալ ամբոխի աչքին [Комиссаров А.С. Иранские авторы о гибели А.С. Грибоедова (Вопросы истории, 1975, № 8, с. 191-192)։ Հեղինակը կարծում է, որ գերիների ազատագրումը և վերաբնակեցումն Ա. Գրիբոյեդովը կատարել է Թուրքմենչայի պայմանագրի համապատասխան հոդվածների հիման վրա և ոչ մի ինքնազլխություն թույլ չի տվել, և որ այդ փաստն անտեսվել է)։

¹⁷ Грибоедов. Его жизнь и гибель... , с. 210-211 (Բոդենի հուշերը)։

ծունեությունը Պարսկաստանում արդարացնելու և նրա նահատակության մեջ այլ մեղավորներ և քաղաքական դրդապատճառներ փնտրելու նպատակով:

Իրադարձությունների շուրջ իրանական կողմի ոչ պաշտոնական տեսակետ կարելի է համարել դեսպանակազմի պարսիկ քարտուղարի վկայություններով գրված վերոհիշյալ «Ռազմագեկույցը»: Կարելի է ենթադրել, որ «Ռազմագեկույցը» դեպքերի արտացոլման նաև անգլիական ոչ պաշտոնական տեսակետն է: Հակառակ Բ. Մալցովի վկայությունների, այն ավելի մանրամասն է ներկայացնում դեսպանական առաքելության և Ա. Գրիբոյեդովի պահվածքը, թույլ տված վրիպումները, դեպքերի ընթացքի և ողբերգական ավարտի հանգամանքները¹⁸: Այս փաստաթուղթն պարսկական և ռուսական պաշտոնական տեսակետների նման նույնպես բացառում է կատարվածի քաղաքական դրդապատճառները:

Դեպքերին առավել իրատեսական գնահատական տալուն մեծապես նպաստում են պատմագիտության կողմից քիչ ուշադրության արժանացած հայկական աղբյուրները և Ա. Գրիբոյեդովի ժամանակակիցների հուշերը: Դեսպանակազմի ջարդից փրկված ականատես, հայազգի սուրհանդակ Համբարձումի վկայությունները մյուսներից առանձնանում են գիշերները շահի հարեմից ինչ-որ վրացի կնոջ՝ հաճախ Ա. Գրիբոյեդովի մոտ գալու և իրեն Թիֆլիս տեղափոխելու թախանձագին խնդրանքներով դիմելու, ժողովրդի ու շահի կողմից՝ նրանց սիրային կապի մեջ կասկածվելու և ցասումի հանգամանքների նկարագրություններով: Նա նշում է նախքան ամբոխի հարձակումը մի քանի անգամ դեսպանին իրենց արած նախազգուշացումների և վերջինիս՝ դրանք լրջորեն չընդունելու, ծիծաղելու, դեսպանատան վրա գրոհի, դրա ժամանակ իր խորհրդով ծխնելույզի մեջ Ա. Գրիբոյեդովի թաքնվելու և զոհվելու հանգամանքները¹⁹: Ճիշտ է, Համբարձումի վկայությունները գրի են առն-

¹⁸ Նույն տեղում, 152-184 [Ռուստեմ բեգի կողմից դրամական շորթումները (էջ 152-153), Ղազվինում Սեիդի ծեծը (էջ 155-156), իր անգուսպ աշխատակիցներին Թավրիզ հասնելուց հետո Ա. Գրիբոյեդովի խոստումը և այն անհետևանք թողնելը (էջ 158), Ա. Գրիբոյեդովի կողմից շահի պալատում ընդունելության ժամանակ արարողակարգի խախտումները և այդ առումով հղած բողոքի հայտագիրը (էջ 162), մի պարսիկի կողմից վատ վարքի համար ծառա Ալեքսանդրին ծեծի ենթարկելը (էջ 162-163), ռուս կազակի օդու շիշը պատահաբար ջարդած պարսիկին հրապարակայնորեն դաժանաբար պատժելը (էջ 162-163), շահին և արքունիքին հատկացված ռուսական նվերների առաքման անկազմակերպվածությունն ու ուշացումը (էջ 163-164), խնդրարկու հայերի կողմից իրեն «չզզվեցնելու» համար դեսպանատնից Ա. Գրիբոյեդովի դուրս չգալու (էջ 164), գերիներին ժամանակին փողով գնաճներին՝ ազատելու դիմաց հատուցում չտալու (էջ 164), Միրզա-Յադուբի և Էրկու կանանց հետ կապված իրադարձությունները (էջ 166-174), Ալլահ-Յար խանի հարեմի երկու կանանց բաղնիք ուղարկելու և դրա հետևանքով ժողովրդի և հոգևորականության գրգռվելու (էջ 174), դեսպանատան վրա գրոհին նախորդած իրադարձությունների ու դեսպանակազմի կործանման շատ մանրամասներ (էջ 175-184) և այլն]:

¹⁹ Հ.Ա., նշվ. հոդվ. (Մշակ, 5.1, 6. 1. 1895):

վել տասնամյակներ անց, և նա կարող էր շատ բան մոռացած ու շփոթած լինել, սակայն հետաքրքիր է, որ նրա հուշերի հրապարակման մեջ ոչինչ չի խոսվում ո՛չ հարեմի երկու հայ կանանց, ո՛չ էլ՝ Միրզա-Յաղուբի մասին, այլ ընդամենը հիշատակվում է շահի հարեմի վրացի կնոջ պարագան: Նշենք, որ իրանաբնակ Համբարձումը ռուսական կառավարության կողմից Թավրիզի հյուպատոսի միջնորդությամբ ցմահ ստանում էր հոլանդական 120 չերվոնեց թոշակ⁽²⁰⁾:

Հայկական աղբյուրների հրապարակման տեսանկյունից կարևոր տեղեկություններ է պարունակում Գ. Շերմազանյանի վերոնշյալ հրապարակումը: Ի տարբերություն մյուսների (Բ. Միմոնիչ, Կ. Բոդե), դրանում վկայակոչվում են դեպքերի ժամանակակիցների և ականատեսների կոնկրետ անուններ, որոնք այդ ժամանակ կենդանի էին: Բացի այդ՝ նա համադրել է իր տեղեկությունները, անձամբ եղել է ռուսական ավերված դեսպանատանը և ուղեկցողների նկարագրություններով վերակազմել է իրադարձությունների ընթացքը: Նույնպես չքաղաքականացնելով կատարվածը՝ Գ. Շերմազանյանը բազում մանրամասներ է հաղորդում թեհրանյան իրադարձությունների ընթացքի և զարգացումների մասին²¹, որոնք չկան ո՛չ Բ. Մալցովի, ո՛չ էլ՝ «Ռազմագեկույցի» տեղեկություններում: Նշենք միայն խիստ կարևորները: Այսպես՝ նա գրում է հայտնաբերված գերիներին հարցաքննելուց հետո, ըստ ցանկության, ազատ արձակելու՝ Մանուշար խանին տրված շահի հրամանի մասին: Ալլահ-Յար խանի հարեմի կանանց խնդիրն, ըստ նրա, ծագել է Միրզա-Յաղուբի կողմից, նախքան Ա. Գրիբոյեդովից ռուսահպատակություն խնդրելը և, հենց շահն է կանանց հարցով Միրզա-Յաղուբին ուղարկել դեսպանի մոտ: Նա նշում է նաև Մանուշար խանի (որը եղել է շահի հարեմի կառավարիչը) տանը, վերջինիս, Խոսրով խանի և Միրզա-Յաղուբի գաղտնի հավաքների ու երկար զրույցների մասին, որոնք դարձյալ կատարվել են նախքան ռուսական դեսպանատանը Միրզա-Յաղուբի ապաստանելը: Միրզա-Յաղուբի խուզարկված և թալանված բեռների հարցում Ալլահ-Յար խանի պալատում տեղի ունեցած հանդիպման ժամանակ Բ. Մալցովը գողության մեջ է մեղադրել շահի պալատականներին, ինչն ավելի է վրդովել պարսկական կողմին: Հեղինակը նշում է Միրզա-Յաղուբի ողջ ունեցվածքը, գանձերը, թանկարժեք ձեռագրերը ռուսների կողմից համառորեն պահանջելու, Մանուշար խանի՝ Շահ-Աբդուլ-Ազիմ ուխտատեղիում պատսպարվելու համար Միրզա-Յաղուբին արված հորդորների, երեք անգամ իր զարմիկ Սողոմոն (Սուլեյման) Մելիքյանին վտանգի մասին զգուշացնելու նպատակով դեսպանատուն ուղարկելու, դեսպանի կողմից հեռանալու առաջարկը մերժելու, դեսպանատան գինովցած զինվորների զրգոյիչ պահվածքի, առաջինը դեսպանատնից արձակված կրակոցով 15-ամյա պատանու զոհվելու, դեսպանատան պարսկական պահակագործը հայազգի հրամանատար Յաղուբ-Սուլթանի գլխավորությամբ դեսպանատնից վտարելու, ոչ թե ներսում, այլ դեսպանատան առջև Մանուշար խանի ազգական Սո-

²⁰ Շերմազանյան Գ., նշվ. աշխ., էջ 82:

²¹ Նույն տեղում:

դոմոն Մելիքյանի նահատակվելու, դեպքերի միայն 4-րդ օրը շահի հրամանով դիակները թաղելու և 6-7-րդ օրը թաղած տեղից Ա. Գրիբոյեդովի դին հանելու և առանձնացնելու հանգամանքները: Կատարված ոճրագործության մեջ Գ. Շերմազանյանը մեղադրում է ոչ թե շահին, այլ՝ զանազան սադրիչ և գրգռող լուրեր տարածող որոշ պալատականների: Դեսպան սպանելը ծանրագույն մեղք էր համարվում շիա մահմեդական կրոնում, դրա համար էլ, ըստ նրա, ժողովրդին գրգռելու նպատակն է եղել ընդամենը աղմուկ-աղաղակով ռուս դեսպանին ահաբեկելը, դեսպանատանը պահվող կանանց, Միրզա-Յադուբին վերադարձնելը և այլևս թաքցրած գերիներին չհանձնելը²²:

Թեհրանի իրադարձությունները քաղաքական տեսանկյունից չդիտարկող հայկական մեկ այլ աղբյուր է դեպքերի ժամանակակից «Մանուել վարդապետ Գյումուշխանեցու հիշատակարանը»²³, որն անտիպ է, և միայն մի փոքրիկ բաժինն է հրապարակվել Բաբգեն վարդապետի կողմից²⁴:

Հայկական աղբյուրների շարքը եզրափակենք շահի կազակային բրիգադի նախկին հրամանատար Կոստոմիսկու արխիվից հետագայում հայտնաբերված մի փաստաթղթով, որը գրի է առել նույն բրիգադի շտաբի պետ, հայազգի Մարտիրոս խանը՝ ռուսական դեսպանատան գրոհի ժամանակ նահատակված Սողոմոն Մելիքյանի (Մանուշար խանի զարմիկի) եղբորորդի, գեներալ (սարթիբ), դարձյալ Սուլեյման Մելիքյան անունը կրող մեկի պատմածի հիման վրա²⁵: Վերջինս Միրզա-Յադուբին ներկայացնում է որպես Թիֆլիսի գավառից գերված վրացի (²⁶ - Ս.Վ.), ինչպես նաև Ալլահ-Յար խանի հարեմի եր-

²² Շերմազանեան Գ., նշվ. աշխ., էջ 77-103:

²³ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), Արխիվ Գյումուշխանյանի, ֆ. 332, ց. 1, գ. 526, թ. 86-87:

²⁴ Բաբգեն վարդապետ, Մանուել վարդապետը Ա.Ա. Գրիբոյեդովի մասին (1795-1829), մահվան ուրջուն և հինգ ամեայ տարեկիցի առթիվ («Սպանումն դեսպանին ռուսաց») («Արարատ», Պաշտօնական ամսագիր Հայրապետական աթոռոյ Ս. Էջմիածնի, հրամանաւ Տ.Տ. Գևորգ Ե Սրբազնագոյն Հայրապետի Ամենայն հայոց, 1914_ՌՅԿԳ, Ս. Էջմիածին, փետրուար, համար Բ, էջ 161-162):

²⁵ Петров Г.М. Новые материалы об убийстве А.С. Грибоедова (Учёные записки Института востоковедения, т. VIII, Иранский сборник, М., 1953, с. 146-165): Գ. Պետրովը, հենվելով ազգագրագետ Ա. Սմերդինսկուն հնագետ և ազգագրագետ Գ. Պրոգրիտելիի պատմածի վրա, ներկայացնում է ոմն «Ս»-ի և Բ. Մալցովի՝ 1875թ. Նիցցայում կայացած մի անհավանական գրույցը, թե իբր, Բ. Մալցովի պատմելով, վերջինս փրկվել է իր ծառայի կողմից իրեն գորգի մեջ փաթաթելու և սենյակի անկյունում կանգնեցնելու շնորհիվ: Սակայն հայտնի է, որ ռուսական դեսպանատունը թալանվել է ջարդի ժամանակ: Որտե՞ղ է հայտնվել այդ դեպքում Բ. Մալցովը: Մանուել վարդապետը գրում է. «...Բսկ անգուսպ պարսից սրիկայք, շեղք (շեյխերը - Ս.Վ.), ուլամայք, տեսին, որ իւրեանց ըստ հաճոյս սեպիականեալ զաղջկունս և զկանայս, յետս պահանջին և առնուն, խռովութիւնս յարուցեալ մտանեն ի բնակարան դեսպան Գրիպայեդովին, ի 1829 ամի կոտորեն զամենայն ի տան նորին եղեալսն, սպանանեն նաև զինքն գդեսպանն: Տեսեալ ծերունի Քեթալի Շահն (Ֆաթի-Ալի - Ս.Վ.) և ժառանգ Ապալաս-Միրզայն և այլ խոհական իշխանաւորք, թէ տակաւին առաջի պատերազմի վերքն չառողջացուցեալ, երկրորդին դուռն մեծ բաց լինի ի պատճառս անոպայից...»:

կու կանանց փոխարեն հիշատակվում է անձամբ Ա. Գրիբոյեդովի մոտ եկած և ապաստան խնդրած մի վրացի կնոջ մասին (հմտ. Համբարձումի վկայությունը): Դեսպանատնից հեռանալու վերաբերյալ Ա. Գրիբոյեդովին համառորեն արված խնդրանքներին ի պատասխան՝ վերջինս հայտարարում է, որ ինքը ոչնչից չի վախենում և բոլոր հայերին վախկոտ է համարում:

Ամփոփելով վերը ներկայացված աղբյուրներում և վկայություններում տեղ գտած տեղեկությունները՝ նշենք, որ դրանցում բացակայում են կատարվածի քաղաքական դրդապատճառների մասին կարծիքները: Որպես մեղավորներ են նշվում Ա. Գրիբոյեդովի և դեսպանակազմի որոշ աշխատակիցների վարքից ու գործունեությունից դժգոհ մի քանի պալատականներ և մոլեռանդ հոգևորականներ: Վկայությունների մեծ մասում շեշտվում է համառ և անզիջում Ա. Գրիբոյեդովին ամբոխի հուզումներով ընդամենը վախեցնելու և երկու կանանց ու Միրզա-Յաղուբին հետ ստանալու նպատակների մասին: Աղբյուրներում անուղղակի կամ բացահայտ մեղադրանքներ կան Ա. Գրիբոյեդովի հասցեին այն բանի համար, որ, քաջատեղյակ լինելով հանդերձ իրանական վարքուբարքերին, կրոնին ու սովորույթներին՝ իր անխոհեմ պահվածքով և անժամանակ պահանջներով վիրավորել է պարսիկների ազգային ու կրոնական ինքնասիրությունը²⁶, ինչով առիթ է տվել պարսկական կողմին գնալ ծայրահեղությունների և, որպես ղեկավար, չի կարողացել վերահսկել իր ենթակաների գործողությունները: Նման պահվածքն անուղղակիորեն հաստատվում է նաև վերադասներին հղած՝ Ա. Գրիբոյեդովի նամակներով: Այսպես՝ Թավրիզից Բ. Պասկևիչին նա գրում է. «Ոչ թե իմ կարողությանը, այլ բոլորի վրա մեր զենքի տարածած վախին եմ վերագրում. Փառք Աստծո, ես այստեղ այնպիսի դիրք եմ դրել, որ ինձանից բոլորը վախենում են: Ոչ մեկի հետ բարեկամություն չունեմ և չեմ ուզում այն. միայն՝ հարգանք Ռուսաստանի և նրա պահանջների նկատմամբ... թող առավել մտածեն իմ ազդեցության մասին, քան այն իրականում կա»²⁷:

Բնչ վերաբերում է դեսպանակազմի կործանման գործին անգլիացիների մասնակցության հարցին, ապա, բացառությամբ Բ. Պասկևիչի՝ Գ. Նեսելրոդին ուղղված նամակում տեղ գտած տողերի, մնացած փաստաթղթերում Պարսկաստանում անգլիացիների դիվանագիտական գործունեության վերաբերյալ հիշատակումները չեն առնչվում առաքելության կործանման և Ա. Գրիբոյեդովի սպանության հանգամանքներին, իսկ Բ. Պասկևիչը հնարավոր չի համարում այն, որ անգլիացիները մտադիր են եղել ոչնչացնել ռուսական առաքելությունը: Նախարար Մաքդոնալդի նամակից երևում է, որ անգլիացիներին ևս դուր չի եկել կատարվածը, իսկ դրանում խորհրդային հետազոտողների կողմից «քրեական բովանդակությամբ» ենթատեքստերի որոնումը²⁸ բոլոր-

²⁶ Грибоедов. Его жизнь и гибель... , с. 104-105.

²⁷ Грибоедов А.С. Сочинения в двух томах, т. 2, М., 1971, с. 329 (1828թ. ղեկտեմբերի նամակը Բ. Պասկևիչին).

²⁸ Пашуто В.Т. Дипломатическая деятельность А.С. Грибоедова (Исторические записки, т. 24, М., 1947, с. 149).

ընդհատվել էր չի հաստատում կատարվածում անգլիացիների մեղսակցությունը²⁹։ Անգլիան այս փուլում շահագրգռված չէր ընթացող ռուս-թուրքական պատերազմում թուրքերի պարտությունների պայմաններում հրահրել ռուս-պարսկական նոր պատերազմ, քանի որ վստահ էր, որ այն ևս հաջողությամբ չի ավարտվի և կործանարար կլինի Պարսկաստանի համար, ինչն էլ կվտանգեր անգլիական տիրապետությունը Հնդկաստանում։ Հարկ է չանտեսել, որ Մաքդոնալդը 1824թ. Պարսկաստանում նախարար-դեսպան էր նշանակվել Արևելա-հնդկական ընկերության կողմից, և առաջին խնդիրը Հնդկաստանում անգլիական տիրապետության անվտանգության ապահովումն էր և ոչ թե ռուս-թուրքական պատերազմում ի նպաստ թուրքերի գործելը, ինչին, դրան հակառակ, անհետատեսություն էր հանդիսանում էին Պարսկաստանում գտնվող անգլիական նվաճողական քաղաքականության կողմնակիցներ Հենրի ու Ջորջ Վիլյամսները և Բոլիշկ Մաքնելլը, որոնք նաև հակառուսական պայքարի ջատագույններ էին³⁰։ Ա. Գրիբոյեդովի սպանության գործում Անգլիայի և շահի մեղսակցության բացակայության մասին էին վկայում նաև Դ. Մաքդոնալդի հաշվետվությունն Արևելա-հնդկական ընկերության քարտուղար (արտգործնախարար) Ջորջ Սուինթոնին՝ 1829թ. փետրվարի 19-ին և Դ. Մաքդոնալդին ուղղված Ֆաթհ-Ալի շահի, վարչապետ Աբուլ-Փահաբ-Միրզայի և Միրզա Աբուլ-Հասան խանի նամակները³¹։ Հայտնի է, որ Անգլիան և Ռուսաստանը Մերձավոր Արևելքում մրցակից պետություններ էին, և անգլիացիները ռուսական առաքելության ղեկավարի թույլ տված սխալներից ու վրիպումներից օգտվելու առիթը բաց չէին թողնում։ Այս մրցակցության հանգամանքները հետագայում խորհրդային և իրանական պատմագիտության համար հիմք են դառնում կա-

²⁹ АКАК, т. VII, гок. 652, р. 672-673 (Դ. Մաքդոնալդը 1829թ. փետրվարի 21-ին Միրզա-Աբուլ Հասան խանին Թավրիզից գրած նամակում խստորեն դատապարտում է կատարվածը և պահանջում է լիովին փոխհատուցում ու բավարարում, ինչպես նաև կազմակերպիչների հանձնումը՝ բրիտանական կառավարությանը ներկայացնելու համար պահանջելով տրամադրել բացատրություններ, որից հետո իր կառավարությունը կորոշի հետագա հարաբերությունները Պարսկաստանի հետ (ՊՏՄ. 679, р. 693-695)։ (Կ. Նեսելրոդեի 1829թ. ապրիլի 5-ի հրահանգները իշխան Դուգորուկովին, որում պատվիրում է խստորեն պահպանել Թուրքմենչայի պայմանագրի գլխավոր հոդվածները, չսկսել պարսիկների կրոնը, սովորույթները, ինքնասիրությունը ոտնահարող երկրորդական հարցերի վրա և նշում է անգլիական առաքելության դրական գործունեությունը Թուրքմենչայի պայմանագրի կնքումից հետո, գովաբանում է նախարար Մաքդոնալդի ազնիվ բնավորությունն ու խորհուրդ է տալիս ձեռք բերել նրա բարեկամությունը)։

³⁰ Ариштейн Л.М. Новые данные об обстоятельствах гибели (по английским источникам) (Русская литература, 1981, № 2, с. 225-233); Կուլի՝ Պերսիգսկի քննությունները Պերսիգսկի քննությունները (А.С. Грибоедов. Материалы к биографии. Сборник научных трудов, Л., 1989, с 114-122)։

³¹ Ариштейн Л.М. Персидские письма по поводу гибели Грибоедова... (Русская литература, 1981, № 2, с. 119-132)։

տարվածի մեղսակից համարել Անգլիային³²։ Թեհրանյան ողբերգության մեջ թուրքական գործոնի առկայությունը ևս չի ապացուցվում փաստերով։ Օսմանյան Թուրքիան, բացի դիվանագիտական որոշ ձեռնարկումներից, Պարսկաստանում չունեի այնքան ազդեցություն, որ կարողանար կազմակերպել և իրականացնել ռուսական դեսպանակազմի կոտորածը և հատկապես Ա. Գրիբոյեդովի՝ որպես «Մերձավոր Արևելքում ռուսական քաղաքականության գլխավոր մշակողի»³³ սպանությունը։ Բացի այդ, դժվար թե Բրանի շիա մահմեդական հոգևորականությունն ականջալուր լիներ սուննի թուրքերի սադրանքներին, մանավանդ որ դեսպանի սպանությունը շիա ուսմունքում համարվում է ծանրագույն մեղք։ Երկու երկրների միջև թշնամանքն այնքան խորն էր, որ Օսմանյան Թուրքիայի դեմ Պարսկաստանն ավելի շուտ կղաշնակցեր Ռուսաստանի հետ, քան՝ հակառակը։ Բրանում դեռ հիշում էին 1821-1823թթ. թուրք-իրանական պատերազմից առաջ և ընթացքում թուրքական տարածքներում շիա ուխտավորների հալածանքները, ստորագումները³⁴, և թարմ էր 1826թ. ռուսների դեմ դաշնակցելու՝ իրանցիների ջանքերին հակառակ կնքված ռուս-թուրքական՝ Աքքերմանի համաձայնագրի³⁵ փաստի հիշողությունը։

Նախքան Պարսկաստան մեկնելը Ա. Գրիբոյեդովը քաջաձանդ էր տեղի ռուսական դեսպանի պահվածքի և գործունեության վերաբերյալ տրված «Հրահանգներին», որոնք արտգործնախարարի հանձնարարությամբ անձամբ մշակել էր Ա. Գրիբոյեդովը³⁶, և վերջնական տեսքի էր բերել Կ. Ռոդոֆինիկինը³⁷։ Դրանցում հրահանգվում էր ճիշտ ճանաչել այն գծերը, որոնցով տարբեր-

³² Իրանական պատմագրության տեսակետների մասին տե՛ս **Байбурди Ч.** Новое о гибели А.С. Грибоедова... , с. 171-173; **Комиссаров А.С.,** *ԿՀԿ. աշխ.*, էջ 188-195; **Балаян Б.П.** Фальсификация истории гибели А.С. Грибоедова в современной иранской историографии (ՀՄՄՌ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1962, № 2, էջ 118-129); **Խույնի՝** Иранская историография о гибели А.С. Грибоедова (История СССР, 1964, № 6, с. 183-189); **Խույնի՝** Кровь на алмазе "Шах". Трагедия А.С. Грибоедова, Е., 1983, с. 116-141; **Խույնի՝** Дипломатическая история русско-иранских войн и присоединение Восточной Армении к России, Е., 1988, с. 231-244 (ըստ վերը նշված աշխատությունների՝ իրանական պատմագիտությունը կատարվածում, բացի Ա. Գրիբոյեդովից, մեղավոր է համարում նաև անգլիացիներին)։

³³ **Исаакян А.** А.С. Грибоедов и Армения (Պատմա-բանասիրական հանդես, 2005, N 1, էջ 157)։

³⁴ История Ирана. Отв. ред. Иванов М.С., М., 1977, с. 230-231.

³⁵ **Балаян Б.П.** Из дипломатической истории присоединения Восточной Армении к России (Հայկական ՄՄՌ ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտությունների, 1962, N 11, էջ 19-20)։

³⁶ **Грибоедов А.С.** Сочинения, т. 2, с. 342-347.

³⁷ АКАК, т. VII, гок. 591, с. 622-624 (1828թ. մայիսի 28-ի՝ տիտղոսավոր խորհրդական Ռոդոֆինիկինի հաղորդագրությունը Ի. Պասկևիչին)։

վում են անկարողությունը և պահանջվածը կատարելու անհնարինությունը ծածուկ չկամեցողությունից, որի դեպքում էլ համատությունը և մյուս պարագայում համեստությունն ու ներողամտությունը պարսիկներին կապացուցեին Ռուսական կայսրության մեծահոգության անփոփոխ լինելը³⁸։ Ա. Գրիբոյեդովի նահատակության գործում ռուսական կողմը, փորձելով շրջանցել նրա սխալները, իսկ պարսկական կողմն էլ՝ արդարացնել շահական արքունիքին, իրադարձություններում ակնհայտորեն առաջ են քաշում ամեն ինչ հայերի պատճառով (Միրզա-Յաղուբ, դեսպանակազմի աշխատակիցներ, Դադաշ-բեգ, Միրզա-Նարիման Շահնազարյան, հարեմի երկու կանայք) կատարված լինելու հանգամանքները։ Այսպես՝ Միրզա-Աբուլ-Հասան խանը Դ. Մաքդունալդին գրած վերոհիշյալ նամակում բացահայտորեն մեղադրում է հայերին և մասնավորապես՝ Դադաշ-բեգին, որ իբր նա է առաջինը կրակել ու սպանել մի իրանցու, իբր հայերը փողոցներում վիրավորել են իսլամ կրոնն ու գրգռել բնակչությանը և նպաստել կողմերի բախմանը³⁹։ Միրզա-Նարիմանի «կաշառվելու» վերաբերյալ Ի. Մալցովի վկայությունն արդեն ներկայացրել ենք։ Երկու կողմերին էլ ձեռնառու էր առաջ քաշված «հայկական գործոնը» կատարվածում կարևորելը, քանի որ իրանական կողմը, փորձելով ամեն կերպ ձեռք բերել ռուսների ներողամտությունը, չէր կարող բացահայտորեն մեղադրել ռուսական կողմին, ինչը կարող էր ավելի բարդացնել իրավիճակը, իսկ ռուսները չէին կարող մեղադրել պարսիկներին և միևնույն ժամանակ սահմանափակվել միայն նրանց ներման խնդրանքներով։ Փորձենք բացել «հայկական գործոնի» վերաբերյալ փակագծերը։ Այսպես՝ Ալլահ-Յար խանի հարեմի երկու կանայք հայրենիք վերադառնալու խնդրանքով ոչ թե իրենց կամքով են դիմել Ա. Գրիբոյեդովին, այլ նրանց Ռուստեմ-բեգն է ուժով բերել դեսպանի մոտ։ Կանայք սկզբում չեն համաձայնվել վերադառնալ, բայց նրանց 2 օր «համոզելով» պահել են դեսպանատանը, և միայն 3-րդ օրն են տվել իրենց «համաձայնությունը», սակայն, չգիտես ինչու, շարունակել են կապ պահել Ալլահ-Յար խանի՝ զրսում գտնվող ծառաների հետ, որոնք փորձել են բաղնիք տանելու ճանապարհին հետ խլել նրանց, բայց չի հաջողվել։ Պարզ չէ, թե ինչ նպատակով էր բացառապես տղամարդկանցով լեցուն դեսպանատան ներսում կազմակերպվել կանանց բաղնիք տանելը։ Ա. Գրիբոյեդովը կարող էր վերադառնալու հարցում համառոտ Միրզա-Յաղուբին և հարեմի կանանց չպահել դեսպանատանը և հատուկ հսկողությամբ ուղարկել ինչ-որ անձեռնմխելի ուխտատեղի (ինչպես առաջարկում էր Մանուչար խանը)։ Դեսպանը կարող էր հենց նույն գիշերը, երբ ամեն ինչ դեռ գաղտնի էր, համոզել Միրզա-Յաղուբին հետաձգել մտադրությունն իրագործելը՝ պատճառաբանելով, որ վերջինս ռազմագերի չէ, այլ՝ բարձրաստիճան պաշտոնյա, և որ ինքն իրավասու չէ նման դեպքում առաջնորդվել Թուրքմենչայի պայմանագրի համապատասխան հոդվածով։ Ռուս-իրանական հարաբերություններում նոր լարվածությո-

³⁸ Грибоедов А.С. Сочинения, т. 2, с. 342.

³⁹ Аринштейн Л.М. Персидские письма по поводу гибели Грибоедова, с. 131.

յուն թույլ չտալու համար նա կարող էր հղում կատարել նոր ցուցումների սպասելու հանգամանքին: Աղբյուրներում դեսպանատան աշխատակիցների վատ կամ ամբարտաւան պահվածքի մասին վկայությունները հիմնականում վերաբերում են հավատարմի վրացի Ռուստեմին, Ա. Գրիբոյեդովին, նրա ծառա և կաթնեղբայր Ալեքսանդրին, շուկայում հարբած վիճակում կռիվ սարքած ռուս կազակին, իսկ Դադաշ-բեգի⁴⁰, Միրզա-Նարիմանի և դեսպանակազմի հայ այլ անդամների անբարո պահվածքի մասին կոնկրետ դեպքեր չեն հիշատակվում:

Ասվածը թույլ է տալիս եզրակացնել հետևյալը:

- 1829թ. թեհրանյան ողբերգությունը միայն քաղաքական դրդապատճառներով բացատրելը միակողմանի է. դիպվածը պարսիկ ռուսատյաց աշխարհիկ ու հոգևոր մի քանի գործիչների, անգլիացի որոշ դիվանագետների հակառուսական ջանքերի, ռուսական դեսպանակազմի և դեսպանի գործած սխալների, անհարկի համառության և շահի՝ իրադարձությունների զարգացումը սկզբում կանխել չկամենալու, հետո էլ անկարողության հանգամանքների միասնության հետևանք էր:
- Ռուսական դեսպանական առաքելության կործանման հետ կապված իրադարձությունների համակողմանի և իրատեսական պատկերի ամբողջացումը հնարավոր է դառնում միայն եղելության վերաբերյալ քիչ ուշադրության արժանացած հայկական աղբյուրների՝ այլ վկայությունների և աղբյուրների հետ համադրական վերլուծության շնորհիվ:
- Վերոհիշյալ ողբերգական իրադարձության մեջ հայերին մեղադրելու հանգամանքը պայմանավորված էր ռուսական և պարսկական կողմերի թույլ տված վրիպումներն ու սխալներն արդարացնելու ձգտմամբ:

⁴⁰ Գ. Շերմազանյանը վկայում է, որ Դադաշ-բեգը (Աբրահամ Դադաշյան Աստրախանցին) Թեհրան էր ժամանել դեպքերի նախորդ կեսգիշերից անց՝ Թավրիզից բերելով դեսպանատան բեռները: Նրան հանդիպած Սողոմոն Մելիքյանը խնդրել է դեսպանին համոզել՝ լսելու Մանուշար խանի հորդորները, բայց դեսպանը կոպտորեն հրամայել է չմիջամտել իր գործերին (Շերմազանյան Գ., նշվ. աշխ., էջ 96-97): Սա նշանակում է, որ Դադաշ-բեգը չէր կարող առնչություն ունենալ դեսպանատան աշխատակիցների վատ պահվածքին, իսկ Աբուլ-Հասան խանի հիշատակությունից բացի՝ ոչ մի աղբյուր, նույնիսկ՝ «Ռազմագեկույցը», չեն հիշատակում Դադաշյանի կրակելու և պարսիկ սպանելու մասին: Դրա փոխարեն աղբյուրները նշում են կազակների գրգռիչ պահվածքի և նրանց կողմից կրակ բացելու մասին:

**ПРОВАЛ ДИПЛОМАТИЧЕСКОЙ МИССИИ
А.С. ГРИБОЕДОВА В ТЕГЕРАНЕ**

СИМОНЯН В.Р.

Резюме

Обстоятельства провала русской дипломатической миссии, возглавляемой русским писателем А.С. Грибоедовым, по сей день привлекают внимание исследователей. Тегеранская трагедия, имевшая место 30-го января 1829 года, явилась результатом русофобии ряда персидских светских и религиозных деятелей, а также антирусских усилий некоторых английских дипломатов. Немалую роль в ней сыграли промахи и ошибки русского посла А. Грибоедова, его неоправданная неуступчивость в решении тех или иных дипломатических вопросов. При этом в качестве основной причины провала русской дипломатической миссии выдвигался армянский фактор.

**THE FAILURE OF A. GRIBOYEDOV'S DIPLOMATIC
MISSION IN TEHRAN**

V. SIMONYAN

Abstract

The destructive circumstances of the Russian diplomatic mission led by Russian writer A. Griboyedov still attract the researchers' attention. On January 30, 1829, Tehran tragedy was the result of a few secular and spiritual Russophobia Iranian figures as well as the result of anti-Russian efforts of some English diplomats. A. Griboyedov's errors and deviations, his unjustified unyielding behaviour in the process of the solution of some questions were of no less importance. The failure of the Russian diplomatic mission was also considered to be due to the Armenian factor.